

յաջորդութեան իրաւամբ: Անիկա այդ տեղ կու գայ՝ արեւելեան Հնդկաստանի ճամբով երթալու համար իւր գահանիստ վայրը: Պիտի գայ Ձեր Սրբութեան, որպէս զի ներկայացնէք զինքը կաթողիկէ թագաւորին եւ միջնորդէք, որ Նորին վեհափառութենէն որ եւ է նպաստ մը ստանայ. որովհետեւ այն գումարը, որ այն Դպրոցին համար երբեմն երբեմն պիտի մատակարարուի ասկէ, պիտի չկարենայ բաւական ըլլալ: Այս կէտի մէջ պէտք է Ձեր Սրբութիւնը նպաստամատոյց ըլլայ յիշեալ Գերապայծառին, այնպէս ինչպէս Դուք ի դէպ եւ պատշաճ կը համարիք. կարող էք գործածել նաեւ Մեր Տեառն եւ Ս. Ժողովին անունը: Ապացուցուցէք Նորին վեհափառութեան, թէ որչափ հաճելի պիտի ըլլայ Աստուծոյ անոր այս առատաձեռնութիւնն եւ մեծանձնութիւնը այսպիսի կարեւոր գործի մը համար, որ կոչուած է փրկել մեծաթիւ հայ ժողովուրդը, որ պէտք ունի օգնութեան. յիշեցուցէք զարձեալ Նորին վեհափառութեան այն փառքը, զոր պիտի գտնէ այս Ազգին քով, որ թերեւս անգուտ չըլլայ իր ժամանակին նաեւ Սպանիոյ թագին համար. եւ վերջապէս ըրէք այն ամէնը, ինչ որ յարմար թուի Ձեր խոհեմութեան եւ կարող է նպաստաւոր ըլլալ յիշեալ Գերապայծառին:

Հռոմ, 19 Յուլիս 1624:

Զիտտաղինի ունէր Ս. Ժողովէն յանձնարարարական մ'ալ Սպանիոյ արքեպիսկոպոսի